

258

№ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ
Գ. Գասարանի աշակերտ-ունիների

ՆՈՅՆ ԴՊՐՈՑԻ 60-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

№ 1

ԿՐՈՆ

ԵՒ ԲԱՐՈՅԵՎԱՆԱԼԻԹԻՒՆ

L. S A L U S H A Z H



Թարգմ. Լ. Տատեանի



1913

Տպարան „ՓԱՐՈՍ“ Թալրիզ

2

Կ-87

890.23
P 60.3/

13 APR 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽԵԱՆ ԴՊԲՈՅԻ
Գ. Դաստրանի աշակերտութիւնը

№ I

ՆՈՅՆ ԴՊԲՈՅԻ 60-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

2
4-87

187

ԿՐՈՆ

ԵՒ

ԲԱՐՁԵՎԱՆԱԼԻԹԻՒՆ

L. S A L U S A Z H

Թարգմ. L. Տանեանի

— — — — —

1913
Տպարան „ՓԱՐՈՍ“ Թաւրիդ

24.05.2013

258

234.9

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԿ
ԹԱԿԻՐԻ ԶԼԻՔ Ա. Դ. Ա. Ա. Ա. Ա.
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ԱՐԵՎԵԱՆ ՊՐԵԼԱԿ

60-ԱՄԵԱՅ ՅՈՒԹԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ

Սոյն հրատարակութեան արդիւնքը յառացւելու է „Արամեան և Ս. Աննայեան“ երկուու դպրոցների աշակերտական գրադարանի օգտին:

ՆԻԽՐՈՒԽ է

ՆՈՅՆ ԴՊՐՈՑԻ

ՈՒՍՈՒՑԻՉ

Թարգմանիչը

ԿՐՈՆ ԵՒ ԲԱՐՈՅՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դուք հարցըրիք ինձ, ա.) ի՞նչ եմ հասկանում ես «կրօն» ասելով և բ.) հնարաւոր համարում եմ բարոյականութիւնը իմ հասկացած կրօնից անկախ:

Կաշխատեմ, ըստ կարողութեան, ամենալաւ կերպով պատասխանել այդ զեղեցիկ ձեռվ դրւած ու վերին աստիճանի լուրջ հարցերին:

Ժամանակակից քաղաքակիրթ մարդկութեան մեծամասնութեան համար վճռւած խնդիր է համարւում արգէն այն, որ իւրաքանչիւր կրօնի էութիւնը պէտք է որոնել բնութեան անբացարելի ոյժերի վաղեմի անձնաւորացման, աստւածացման և նրանց երկրագութեան մէջ, մի երեւոյթ, որ առաջ է գալիս բնութեան այդ անհասկանալի ոյժերից առաջացած սնապաշտական երկիւղից:

Այս կարծիքն առանց կասկածանքի ընդունում է որպէս մի հաստատուն բան մեր ժամանակի լուսաւորւած մարդկանց կողմից, և գիտութեան մարդկիկ ոչ միայն չեն հակառակում, այլ իրենք ևս հաստատում են նոյնը պարզ ու որոշ կերպով: Եւ եթէ մէկ մէկ էլ լուսում են Մաքս Միւլլերի և նման մարդկանց ձայներ, ուրոնք տարբեր ծագում ու նշանակութիւն են



վերագրում կրօնին, ապա այդ ձայներն անլսելի
ու անուշաղիր են մնում ընդհանրութեան հա-
մար, որ միաբերան խոստովանում է, թէ կը-
րօնը առհասարակ մնոտիասլաշտութեան ար-
դիւնք է:

Դեռ ոչ շատ վաղ, ներկայ դարու սկիզբ-
ներին¹⁾ ամենայայանի մարդիկ, եթէ նաև բա-
ցասում էին կաթոլիկութիւնն ու բողոքականու-
թիւնը, ինչպէս անում էին նախորդ դարավերջի
Ենցիկլոպեդիստները, սակայն ոչ ոք նրանցից
չէր հերքում, որ կրօնն ընդհանրապէս եղել է
և է իւրաքանչիւր մարդու կեանքի անհրաժեշտ
պայմանը: Չխօսելով գէխսաների²⁾ մասին, ինչ-
պէս են, Բեռնարդէն-դը-Ասն Պիեր, Դիդերո և
Ռուսո, Վոլտերը արծոն կանգնեցրեց Աստուծոյ
համար, Ռոբերտիկը տօնախմբութիւն կատա-
րեց յանուն Փերագոյն էութեան:

Բայց մեր ժամանակում, — շնորհիւ ծան-
ծաղամթիս ու մակերեսութային վարդապետու-

1) ԺԹ դարի մասին պէտք է հասկանալ, որովհե-
տեւ այս յօդւածը գրւած է 1894 թւին:

Ծ. Թ.

2) Դէիզմը այն վարդապետութիւնն է, որ ըն-
դունում է Աստուծոյ՝ որպէս մի զերագոյն զօրութեան
գոյութիւնը՝ ժխտելով սակայն նրա յայտնութիւնը
աշխարհում:

Ծ. Թ.

թեան Օգիւստ Կօնտի,¹⁾ որ, ինչպէս և ֆրան-
սիացիների մեծամասնութիւնը, անկեղծ սրտով
հաւատում է թէ քրիստոնէութիւնը այլ բան չէ,
եթէ ոչ նոյնինքն կաթոլիկութիւնը, և ուրեմն
քրիստոնէութեան կատարեալ իրագործումը
տեսնում է կաթոլիկութեան մէջ,—լուսաւոր-
ւած մարդկութեան համար, որ միշտ յօժարու-
կամ ու փութիսու կերպով ընդունում է ոչինչ
արժէք չունեցող առաջարկութիւնները, վճռու-
ած և ընդունւած բան է, որ կրօնը լոկ մարդկա-
յին՝ վաղուց արդէն անցկացած՝ որոշ զարգացման
շրջանի արտայատութիւնն է:

Ընդունում է, որ մարդկութիւնն անց է
կացըել արդէն երկու շրջան՝ կրօնական և բնա-
զանցական և այժմ թևակոխել է երրորդ՝
բարձրագոյն-գիտական շրջանը, և որ մարդ-
կանց մէջ առաջ եկած բոլոր կրօնական երե-
ւոյթներն ուրիշ բան չեն, եթէ ոչ լոկ վաղեմի
մնացորդներ մարդկութեան համար երբեմն ան-
հրաժեշտ նկատուած հոգեսոր օրգանի, որ վաղուց
արդէն կորցըել է իւր միաքն ու նշանակու-
թիւնը, ինչպէս ձիու համար հինգերորդ մատի
եղունգը: Ընդունում է, որ կրօնի էութիւնը
պէտք է որոնել ընութեան անհասկանալի ոյժե-

1) Օգիւստ Կօնտը (1795-1857) դրական (պօղի-
տիւ) փիլիսոփայութեան հիմնադիրն է և մեծ ազդե-
ցութիւն է ունեցել իւր ժամանակակից գիտութիւն-
ների զարգացման վրայ:

ըի երկիւղից առաջացած երեակայական էակների խոստովանութեան ու նրանց երկրպագութեան մէջ, ինչպէս մտածում էր գեռես հռնում Դեմօկրիտը, և ինչպէս հաստատում են նոյնը նորագոյն փիլիսոփաներն ու կրօնի պատմաբանները:

Սակայն, մի կողմ թողնելով այն, որ գերմանական անձանօթ էակների կամ էակի խոստովանութիւնը ծագել և ծագում է ոչ միշտ բընութեան անհասկանալի ոյժերից առաջացած երկիւղից, ինչպէս վկայում են այդ մասին անցեալ ժամանակի ամենայայանի ու բարձր զարգացման հասած հարիւրաւոր մարդիկ, Սոլքատեսներ, Դեկարտներ, Նիւտոններ և նէնց մեր ժամանակակից նոյնպիսի մարդիկ, որոնք ամենայն բնութեան անհասկանալի ոյժերի երկիւղից առաջ եկած չեն համարում բարձրագոյն գերմանական էութիւնը, — պնդեն այն մասին, թէ կրօնն առաջ է եկել բնութեան անբացարելի ոյժերի մարդկանց վրայ ազդած սնոտիապաշտական երկիւղից, ոչինչ չի պատասխանում իսկապէս զլիսաւոր հարցին, — մրտեղից առաջ եկաւ մարդկանց մէջ գաղափար անտեսանելի գերմանական էակների մասին:

Եթէ մարդիկ վախենում էին որոտ ու կայծակից, ապա նէնց այդ որոտ ու կայծակից էլ կըշարունակէին սարսափել, էլ ինչու համար էր, որ «ննարեցին մեռած մարդկանց նողիներ, որոնց հետ սկսեցին երեակայական յարաբերութիւն ունենալ: Որոտից նոքակարող էին թագնւել և ահաւոր մահից խուսափել, բայց նոքա ննարեցին մի յաւիտենական հզօր էութիւն՝ իրենց անձը նրանից կախւած համարելով, ննարեցին մեռած մարդկանց կենացանի հողիներ՝ ոչ սոսկ երկիւղից, այլ ուրիշինչ որ պատճառներից դրդւած: Եւ ահա այդ պատճառների մէջ, անտարակոյս, պէտք է որոնել էութիւնն այն բանի, որ կոչւում է կրօն:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՅ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

«ՆՆԱՐԵՑԻՆ» ԻՆՉ ՈՐ ՄԻ ԳԵՐԵՑԻ ՏԵՂԱԿԱՆԱԿԱՆԻ
ԷԱԿ, ՄԻ ԽԱՎԻՄԵՐ, ՈՐ ՊԱՆԱԾՈՒՄ ԼԻՎՐԱՆՔԱՎ
ՄԵՂՈՒՄ և ԵՐԵԿՑԱԿԻ շամիթեալ ականավարդ մարդկանց կամց զլիսին:

ST. NERSES SHNORHALI
ARMENIAN PRELACY

Եթէ մարդիկ սարսափում էին մահից, նէնց այդ մահից էլ կշարունակէին սարսափել, էլ ինչու համար էր, որ «ննարեցին մեռած մարդկանց նողիներ, որոնց հետ սկսեցին երեակայական յարաբերութիւն ունենալ: Որոտից նոքակարող էին թագնւել և ահաւոր մահից խուսափել, բայց նոքա ննարեցին մի յաւիտենական հզօր էութիւն՝ իրենց անձը նրանից կախւած համարելով, ննարեցին մեռած մարդկանց կենացանի հողիներ՝ ոչ սոսկ երկիւղից, այլ ուրիշինչ որ պատճառներից դրդւած: Եւ ահա այդ պատճառների մէջ, անտարակոյս, պէտք է որոնել էութիւնն այն բանի, որ կոչւում է կրօն:

Բացի այս, իւրաքանչիւր ոք, որ երբեցէ, թէկուզ նէնց երեխայութեան ժամանակ, ունեցել է կրօնական զգացում, իւր անձնական փորձով զիաէ, որ այդ զգացումը միշտ առաջ է եկել իւր մէջ ոչ թէ արտաքին զարհութելի իւրական երեսյթներից, այլ իւր անձի ոչնչութեան, մենակութեան ու մեղանչականութեան ներքին զիտակցութիւնից, մի բան, որ ոչ մի առնչութիւն չունի բնութեան անբացարելի ոյժերի պատճառած երկիւղի հետ: Ուստի և

մարդ, թէ արտաքին գիտողութեամբ և թէ անձնական փորձով կարող է խմանալ, որ կրօնը ասուածներին արւած այն երկրպագութիւնը չէ, որ առաջ է գալիս բնութեան անհասկանալի ոյժերի երկիւղից, և որ յատուկ է մարդկանց նոցա զարգացման որոշ շրջանում միայն, այլ որ նա երկիւղից և մարդու զարգացման աստիճանից բոլորովին անկախ մի բան է, որը չի կարող ոչնչանալ լուսաւորութեան ոչ մի աստիճանական զարգացմամբ, որովհետեւ միշտ, քանի մարդու գոյութիւն ունի, նրա մէջ եղել է և կլինի այն գիտակցութիւնը, թէ ինքը մի վերջ ունի անվերջ աշխարհում, և թէ ինքը մեղանչական է, այսինքն չէ կատարել այն ամենը, ինչ որ կարող էր և պէտք է անէր:

Եւ յիրաւի, իւրաքանչիւր ոք, նէսց որ դուրս է գալիս երեխայի անասնական վիճակից և իւր առաջին մանկութիւնից, որի միջոցին նա ապրում է առաջնորդելով լոկ այն պահանջներով, որ ներկայանում են նրան իւր կենդանական բնութիւնից, իւրաքանչիւր ոք, որի մէջ զարթում է ինքնտփակցութիւնը, չի կարող չնկատել այն փաստը, որ ամեն բան ապրում է իւր շուրջը վերանորոգւելով, առանց մեռնելու և անսայթաք ենթարկւելով մի հաստատուն յաւիտենական օրէնքի, բայց որ ինքը մենամենակ, գիտակցելով իւր գոյութիւնն անկախ ամբողջ աշխարհից՝ զատազարտւած է

մեռնելու և անհետանալու ժամանակի անհունութեան և տարածութեան անսահմանութեան մէջ, — զատազարտւած իւր վարմուքներին պատասխանատու լինելու գառն գիտակցութեան, այսինքն այն գիտակցութեան, որ փոխանակ վատ վարւելու կարող էր լաւ վարւել: Եւ այս հասկանալուց յետոյ իւրաքանչիւր լրջամիտ մարդ չի կարող չմտածել և չհարցնել ինքն իրեն — ինչու համար է իւր բապէական, անորոշ ու տարտամ գոյութիւնը այս յաւիտենական, հաստատուն օրէնքներով սահմանւած ու անվերջ աշխարհում: Իւրաքանչիւր ոք թևակոխելով մարդկային իսկական կեանքի շրջանը, չի կարող անտես առնել այս հարցը:

Ամեն մարդու մտքում և ամեն ժամանակ յառաջ է գալիս այս հարցը, և իւրաքանչիւր ոք միշտ, այսպէս կամ այսպէս, պատասխանում է նրան: Հէսց այս հարցի պատասխանն է ահա, որ ամեն մի կրօնի էութիւնն է կազմում: Որևէ կրօնի էութիւնը պէտք է որոնել միայն այս հարցի պատասխանի մէջ, թէ ինչո՞ւ եւ ապրում եւ ի՞նչ է իմ յարաբերութիւնը ինձ ըրդապատող անվերջ աշխարհի նկատմամբ: ¹⁾

Կրօնի ամբողջ մետափիզիկան ²⁾, ասուա-

¹⁾ Էնդզծումը թարգմանչին է: Ծ. Թ.

²⁾ Փիլիսոփայութեան այն մասը, որ հետազոտում է գերզգայական էութիւնները և իրերի վերջնական հիմունքները, բայց որը չէ կարող գիտողութեան և փորձի ասարկայ զառնալ՝ մատչելի լինելով միայն բանականութեան:

ծութիւնների և տիեզերքի ծագման մասին նշղած բոլոր վարդապետութիւնները տորբերւում են միմեանցից լոկ իրենց աշխարհագրական, ժողովրդագրական ու պատմական պայմաններով, որոնք և ամեն մի կրօնի յատկանիշերն են լինում: Զկայ ոչ մի կրօն, սկսած ամենաբարձրից մինչև ամենահասարակը, որին հիմք չծառայէր մարդուս յարաբերութիւնը իրեն շրջապատող աշխարհի կամ սրա սկզբնապատճառի հետ: Զկայ ոչ մի նոյնիսկ ամենագուենիկ արարողութիւն, ինչպէս և ոչ մի ամենավսեմ ծխակատարութիւն, որոնք հիմնւած չլինէին նոյն այդ սկզբունքի վրայ: Ամեն մի կրօնական վարդապետութիւն արտայայտութիւն է այն յարաբերութեան, որ այդ կրօնի հիմնագիրը իրու մարդ, բոլոր միւս մարդկանց հետ միասին, ունի աշխարհի կամ նրա ծագման ու սկզբնապատճառի հետ:

Այս յարաբերութեան արտայայտութիւնները խիստ բաղմազան են լինում, համապատասխան ժողովրդագրական և պատմական այն պայմաններին, որոնց մէջ գտնուում է կրօնի հիմնագիրը և սրան հետևող ժողովուրդը: Բացի այդ, այս արտայայտութիւնները միշտ սխալ բացատրութիւնների են հանգիպում ու այլագրակւում այն վարդապետի հետևողների կողմից, որ ընդհանրապէս հարիւրաւոր, երբեմն և հազա-

րաւոր տարիներ ազգում է ժողովրդի հասկացողութեան վրայ: ուստի և թւում է, թէ մարդու յարաբերութիւնները դէպի աշխարհը, այսինքն դէպի կրօնը, խիստ շատ են, մինչդեռ ըստ էութեան, մարդուս դէպի աշխարհը կամ նրա սկզբնապատճառն ունեցած հիմնական յարաբերութիւնը միայն երեք տեսակ է. ա) սկզբնականանձնական, բ.) հեթանոսական-հասարակական: գ.) քրիստոնէական կամ աստւածային:

Ճիշտն ասած, մարդուս դէպի աշխարհն ունեցած հիմնական յարաբերութիւնը միայն երկու է. ա) անձնական, որ կեանքի խորհուրդը տեսնում է անձնական երջանկութեան մէջ, որին մարդս համուռմ է առանձին կամ այլ անձնաւորութեանց հետ միասին, և բ.) քրիստոնէական, որ կեանքի խորհուրդ ընդունում է մարդուս աշխարհ Առաքողին ծառայելը: Իսկ մարդուս դէպի աշխարհն ունեցած երկրորդ յարաբերութիւնը, հասարակականը, ըստ էութեան նոյն առաջինն է, միայն աւելի ընդարձակած:

Առաջինն այս յարաբերութիւնների՝ ամենահինը, այն որ այժմ տեսնում ենք զարգացման ամենասատրին աստիճանի վրայ գըտնուած մարդկանց մէջ, կայանում է նրանում, որ մարդս իրեն ընդունում է ինքնաբաւականութեան մասին մտածող մի էակ, որ ապրում

Է հնարաւոր եղածին չափ ամենամեծ անձնական բարիք վայելելու համար, չմտածելով այն մասին, թէ որքան է տուժում դրանից ուրիշ էակների բարօրութիւնը:

Դէպի աշխարհն եղած այս առաջին յարաբերութիւնից, որի մէջ գանուում է ամեն մի աշխարհ եկող երեխայ, և որի մէջ ապրում էր մարդկութիւնը իւր զարդացման առաջին, հեթանոսական շրջանում, և գեռ այժմ էլ ապրում են բազմաթիւ առանձին, բարոյապէս ամենաբիրտ մարդիկ ու վայրենի ժողովուրդներ,—յառաջ են գալիս բոլոր հին հեթանոսական կրօնները, ինչպէս և ուշ ժամանակի կրօնների ամենասորըն արտայայտութիւնները իրենց աղաւաղւած կերպարանքում. բուգդայականութիւն, ¹⁾ առօ-

¹⁾ Բուգդայականութիւնը թէկ իւր հետեղներից պահանջում է հրաժարւել աշխարհային վայելքից և նոյնիսկ կեանքից, սակայն հիմնուում է նոյն անձնական ինքնարաւականութեան վրայ, այն տարբերութեամբ միայն, որ բուն հեթանոսութիւնը մարդու նպատակը տեսնում է հաճոյքի մէջ, իսկ բուգդայականութիւնը՝ ցաւերից ու վշտերից աղաւաւելու մէջ։ Հեթանոսութիւնը անձնական հաճոյքի համար է ստեղծւած համարում աշխարհը, իսկ բուգդայականութիւնը ասում է, թէ աշխարհը պէտք է ոչնչանայ, որովհետեւ նա մարդու պատճառում է վիշտ ու տառապանք. բուգդայականութիւնը լոկ բացասող հեթանոսութիւն է։

սականութիւն, ¹⁾ մահմեղականութիւն և ուրիշները. Աշխարհի նկատմամբ եղած հէնց այս յարաբերութիւնից է բղխում նաև նորագոյն սպիրիտիզմը, որի հիմքն է անձի պահպանումը և նրա բարօրութիւնը. Բոլոր հեթանոսական պաշտամունքները, բոլոր զոհաբերութիւններն ու ազօթքները երկրաւոր կեանքի բարիքների համար՝ բղխում են մարդուս դէպի կեանքն ունեցող այս յարաբերութիւնից։

Մարդուս դէպի աշխարհն ունեցած երկրորդ յարաբերութիւնը, հեթանոսական-հասարակականը, այն յարաբերութիւնը, որ ունենում է նա զարգացման յաջորդ աստիճանում, և որն առանձնապէս յատուկ է չափահաս մարդկանց, կայանում է նրանում, որ կեանքի նպատակ համարում է ոչ թէ մի առանձին անհատի, այլ մի որոշ խմբակցութեան—ընտանիքի, ցեղի, ժողովրդի, նոյնիսկ մարդկութեան բարօրութիւնը (պողիալիվիստների կրօնի փորձը)։

Ըստ այս յարաբերութեան կեանքի նպատակը փոխազգրւում է անհատից դէպի ընտանիքը, ցեղը, ժողովրդը, անձերից բարկացած մի որոշ խումբ, որի երջանկութիւնն էլ այդ դէպիքում համարւում է միաժամանակ գոյու-

1) Տաօ—չինական աստուածութիւն է, գերագոյն միաբը, որ կառավարում է ամբողջ աշխարհ։

Թեան նպատակը:

Այս յարաբերութիւնից բղխում են բոլոր (նոյն բնաւորութիւնն ունեցող) նախնական կամ նահապետական և հասարակական կրօնները՝ չինական և ճապոնական կրօնները, ընտրեալ ժողովրդի՝ երբայեցոց կրօնը, ռուսայեցոց կայսերական պաշտամունքը, պողիտիվիտների մարդկութեան համար յառաջադրած նպատակը: Նախնայ պաշտամունքի բոլոր ծիսակատարութիւնները չինաց ու ճապոնացոց մէջ, բոլոր կայսերական պաշտամունքները չունեմում—բղխում են մարդուն գէպի աշխարհն ունեցած այս երկրորդ յարաբերութիւնից:

Մարդուս գէպի աշխարհն ունեցած երրորդ յարաբերութիւնը—քրիստոնէականը, այն յարաբերութիւնը, որի մէջ ակամայ զգում է իրեն իւրաքանչիւր ծերունի, և որի մէջ, իմ կարծիքով, նոր—նոր մանում է այժմ մարդկութիւնը, կայանում է նրանում, որ մարդ կեանքի խորհուրդը համարում է ոչ թէ իւր անձնական նրապատակին կամ թէ մարդկանցից կազմւած մի խմբի իւր նպատակին համնելը, այլ միայն և միայն առայելը այն կամքին, որ ստեղծել է նրան և համայն աշխարհը՝ չէ թէ իրենց, այլ այդ իսկ կամքի նպատակներին համնելու համար:

Դէպի աշխարհն եղած այս յարաբերութիւնից բղխում է այն ամենաբարձր, մեզ յայտնի, կրօնական վարդապետութիւնը, որի հիմքերը կամ սկզբունքները կային արդէն պիտթագորեանների, տերապեվտների, ¹⁾ էսուենացիների և պարսիկների, բրահմինների, բուդդայականների և տաօսականների մէջ՝ յանձնս իրենց ամենաբարձր ներկայացուցիչների, բայց որը իւր կատարեալ և վերջին արտայատութիւնը զտաւ քրիստոնէութեան մէջ—իւր իսկական և չաղաւաղած նշանակութեամբ.

Բոլոր կրօնները, ինչ տեսակի էլ նոքա լինին, անխուսափելի կերպով մտնում են մարդուս գէպի աշխարհն ունեցած այս երեք յարաբերութիւններից մէկն ու մէկի մէջ:

Իւրաքանչիւր մարդ, զուրս զալով անասնական վիճակից, անխուսափելիօրէն ընտրում է յիշեալ երեք յարաբերութիւններից առաջինը, երկրորդը կամ երրորդը, և հէնց այս անխուսափելի ընտրութեան մէջ էլ կայանում է իւրաքանչիւր մարդու իսկական կրօնը, անկախ այն հանգամանքից, թէ ինչ զաւանութեան անդամ կձանաչէ նա իրեն անւանապէս:

¹⁾ Այս անունով էին յայտնի Ալէքսանդրիայի շրջակում հաստատւած երբայեցի ճգնակեաց աղանդաւորները, որոնց գորութիւններ առել է մինչև Դ. Թ.

Եւրաքանչիւր ոք անպայման, վտղ թէ ուշ,
որոշում է իւր յարաբերութիւնը աշխարհի նր-
կասմամբ, որովհետեւ բանական արարածը չէ
կարող ապրել իրեն շրջապատող աշխարհում
առանց որևէ յարաբերութիւն ունենալու դէպի
այդ աշխարհը:

Եւ որովհետեւ ցարդ մարդկութիւնը միայն
երեք յարաբերութիւն է մշակել դէպի աշխարհը,
և մեզ յայտնի է միայն երեքը, ուստի ամե-
նայն ոք անխուսափելիօրէն յարում է գոյու-
թիւն ունեցող երեք յարաբերութիւններից մէկն
ու մէկին, և կամայ-ակամայ պատկանում է որևէ
մէկին այս երեք հիմնական կրօններից, որոնց
մէջ բաժանւած է ամբողջ մարդկային ազգը:

Եւ հետեւապէս քրիստոնեայ աշխարհի լու-
սաւորւած դասի խիստ տարածւած այն կարծի-
քը կամ պնդումը, թէ նրանք արդէն զարգաց-
ման այնպիսի բարձրութեան են հասել, որ այլ
ևս ոչ մի կրօն չունին և կարիք էլ չեն զգում
ունենալու, — էապէս միայն այն է հասատում,
որ այդ մարդիկը չընդունելով քրիստոնէական
կրօնը, միակ կրօնը, որ յատուկ է մեր ժամա-
նակին, հետեւում են ստորին-հասարակական
կամ նախնական-հեթանոսական կրօնին՝ չգիտակ-
ցելով իրենք այդ բանը:

Մարդ առանց կրօնի, այսինքն առանց որևէ
յարաբերութեան աշխարհի հետ՝ նոյնպէս ան-

հընար է երկակայել, ինչպէս անհնար է երկա-
կայել մարդ—առանց որտի: Նա կարող է չի-
մանալ, որ ինքը կրօն ունի, ինչպէս մարդ կա-
րող է չիմանալ, որ ինքը սիրտ ունի, բայց ինչ-
պէս առանց որտի մարդ չէ կարող լինել, այն-
պէս և առանց կրօնի մարդ—չէ կարող գոյու-
թիւն ունենալ:

Կրօնը մարդուս այն յարաբերութիւնն է,
որի մէջ զգում է նաև իրեն դէպի շրջապատող
անվերջ աշխարհը կամ դէպի նրա սկզբնապատ-
ճառը. և բանական մարդը չէ կարող որևէ յա-
րաբերութիւն չունենալ դէպի այդ աշխարհը:¹⁾

Այսպէս, ուրեմն, ձեր առաջին հարցին, թէ

¹⁾ Ապա շեղեկով բուն նիւթից հեղինակը երկար-
օրէն խօսում է այն մասին, թէ վիլխորիայութիւնը
կամ, ընդհանրապէս, գիտութիւնը անկարող է որոշել
մարդուս յարաբերութիւնը դէպի անվերջ ու անսահ-
ման աշխարհը կամ դէպի նրա սկզբն ու սկզբնապատ-
ճառը—հէնց միայն այն պարզ պատճառով, որ նոյն
բան ուրեւէ վիլխորիայութիւն կամ մի ուրեւէ գիտութիւն
յառաջ գալը անհրաժեշտ է զոյտրիւնը այն բանի, ա-
ռանց որի անհնարին է մսին ուրեւէ գործողութիւն: Իսկ
երբ մի բան արդէն գոյութիւն ունի, նա չէ կարող
այլիս իրենից յետոյ եղածի հետեւանք համարւել:—
Յիշեալ մասը մենք աւելորդ համարեցինք մէջ բերել
այստեղ, որպէսզի առանց այն էլ ձգձգւած յօդւածն
աւելի ևս չձգձւի:

ինչ եմ հասկանում ես «կրօն» ասելով, պատասխանում եմ. կրօնը մարդուս որոշածյարաբերութիւնն է իւր և յաւիտենական անվերջ աշխարհի կամ նրա սկզբի ու սկզբնապատճառի միջն:

Առաջին հարցին տւած սոյն պատասխանից ինքնըստինքեան հետեւմ է և երկրորդ հարցի պատասխանը:

Եթէ կրօնը մարդուս գէպի աշխարհն ունեցած յարաբերութիւնն է, որ որոշում է նրա կեանքի նպատակը կամ խորհուրդը, ապա ուրեմն բարոյականութիւնն էլ մատնանշում է և պարզում մարդուս այն գործունէութիւնը, որ ինքնըստինքեան բղխում է մարդուս գէպի աշխարհն ունեցած այս կամ այն յարաբերութիւնից:

Եւ որովհետեւ հիմնական յարաբերութիւն գէպի աշխարհը կամ նրա սկզբնապատճառը յայտնի է մեզ միայն երկուոր, եթէ նկատենք հեթանոսութեան-հասարակական յարաբերութիւնը պէս ընդարձակում անձնականի, կամ երեքը, եթէ նկատենք հասարակական-հեթանոսութեանը որպէս առանձին յարաբերութիւն, ուստի բարոյական վարդապետութիւններ ևս գոյութիւն ունին միայն երեք տեսակ. ա) նախնական-վայրենի կամ անձնական բարոյական վարդապետութիւն, բ) հեթանոսութեան կամ հասարակա-

կան բարոյական վարդապետութիւն և գ) քրիստոնէական կամ աստուածային բարոյական վարդապետութիւն, այսինքն ծառայութիւն Առարձուն:

Մարդուս գէպի աշխարհն ունեցած առաջին յարաբերութիւնից բղխում են բոլոր հեթանոսական կրօններին յատուկ վարդապետութիւնները բարոյականութեան մասին, որոնց հիմքն է՝ ձգտում գէպի անհատական-անձնական երջանկութիւն, ուստի և որոնք մատնանըստում են այն բոլոր կենսական վիճակները, որոնք ամենամեծ չափով անձնական երջանկութիւն են մատակարարում և այդ երջանկութեան համար միջոցներ են ցոյց տալիս:

Աշխարհի նկատմամբ եղած այս յարաբերութիւնից են բղխում հետեւետլ բարոյական վարդապետութիւնները, էպիկուրեան վարդապետութիւնը իւր ստորին վիճակում, մահմեդական բարոյական վարդապետութիւնը, որ գուեհիկ երջանկութիւն է խոստանում մարդկանց այս և թէ այն աշխարհում, և ուտիլիտարիստների աշխարհային բարոյականութիւնը, ըստ որում մարդուս կեանքի նպատակն է անձնական երջանկութիւնը միմիայն այս աշխարհում:

Այս վարդապետութիւնից, որը կեանքի նըպատակ համարում է առանձին անհատի երջանկութիւնը, ուրեմն և անձնական վշտերից ու

տանջանքներից ազատւելը, յառաջ են գալիս բուդպայականութեան բարոյական վարդապետութիւնը իւր ստորին վիճակում և պեսսիմիստական աշխարհային վարդապետութիւնը:

Մարդուս դէպի աշխարհն ունեցած երկրորդ՝ հեթանոսական յարաբերութիւնից, որ կեանքի նպատակ է դնում անհատներից բարդացած մի որոշ խմբի երջանկութիւնը, բըդխում են այն բարոյական վարդապետութիւնները, որոնք պահանջ են դնում մարդու վրայ ծառայելու այն խմբակցութեան, որի երջանկութիւնը համարւում է կեանքի նպատակ: Այդ վարդապետութեանց համաձայն երջանկութիւն կարելի է վայելել միայն այն չափով, ինչ չափով որ վայելում է ամբողջ խմբակցութիւնը, որ և հանգիսանում է կեանքի կրօնական հիմքը:

Դէպի աշխարհն եղած այս յարաբերութիւնից առաջ են գալիս հին յունա-հառնէական աշխարհի մեզ յայտնի բարոյական վարդապետութիւնները, որոնց համաձայն անհատը միշտ զոհում էր իւր անձը հասարակութեան համար. նոյնպէս էր և չինական բարոյականութիւնը. նոյն այս յարաբերութիւնից բգխում են և հրէական բարոյականութիւնը, ըստ որում մարդուս անձնական երջանկութիւնը ստորագառւում է ընտրեալ ժողովրդի երջանկութեան, և, վերջապէս, մեր ժամանակի բարոյականութիւնը, որ անհատական զոհեր է պահանջում յա-

նուն ընդհանուրի պայմանական երջանկութեան: Դէպի աշխարհն եղած սոյն յարաբերութիւնից բգխում է նաև բարոյականութիւնը կանանց մեծամասութեան, որոնք զոհում են իրենց անձը ընտանիքի և զիստորապէս երեխաների համար:

Ամբողջ հին, մասսամբ էլ միջին ու նոր պատմութիւնը լիքն է այս ընտանեկան-հասարակական բարոյականութեան սխրագործութիւններով: Եւ ներկայումս մարդկանց մեծամասնութիւնը, երեակայելով միայն իրենք իրենց, թէ զաւանելով քրիստոնէութիւնը, հետեւմ են քրիստոնէական բարոյականութեան, իրականութեան մէջ հետեւում են միայն հեթանոսական բարոյականութեան և այդ բարոյականութիւնն էլ համարում իդէալ նոր սերընդի գասափարակութեան:

Դէպի աշխարհն եղած երրորդ, այսինքն քրիստոնէական յարաբերութիւնից, որի համաձայն մարդու իրեն համարում է զործիք բարձրագոյն կամքի ձեռին՝ նորա նապատակներն իրականացնելու համար, յառաջ են գալիս և կեանքի մասին եղած սոյն հասկացողութեան համապատասխանող բարոյական վարդապետութիւնները, որ պարզում են մարդուս կախումը բարձրագոյն կամքից և որոշում այդ կամքի պահանջները:

Դէպի աշխարհն եղած այս յարաբերութիւ-

նից բղխում են մարդկութեան յայտնի բոլոր
բարձր բարոյական վարդապետութիւնները, ինչ-
պէս պիւթագորեանների, ստոլիկեանների, բուշ-
դայականների, բրահմինականների, տաօսական-
ների բարոյական վարդապետութիւնները իրենց
զարգացման բարձրագոյն աստիճաններում և
քրիստոնէական բարոյականութիւնը իւր իսկա-
կան մտքով, որ պահանջում է հրաժարել իւր
ոեփական կամքից և ոչ միայն անձնական,
այլ և ընտանեկան ու հասարակական երջան-
կութիւնից, կատարելու համար մեր գիտակցու-
թեան շնորհիւ մեզ յայտնւած այն կամքը, որ
ուզարկել է մեզ աշխարհ:

Դէպի անվերջ աշխարհը կում գէպի նրա
սկզբնապատճառը եղած այս երրորդ յարաբե-
րութիւնից բղխում է իւրաքանչիւրի անկեղծ ու
անշողոքորթ բարոյականութիւնը, անկախ
այն բանից, թէ անւանապէս ինչ է դաւանում
կամ քարոզում նա իրեն բարոյականութիւն,
կամ թէ ինչ է ուզում երեալ մարդկանց աշքին:

Այնպէս որ, մի մարդ, որ իւր գէպի աշ-
խարհն ունեցած յարաբերութեան էութիւնը
համարում է հնար եղածին չափ անձնական մեծ
երջանկութիւն վայելելը, որքան էլ նա կրկնե-
լու լինի, թէ ինքը բարոյական է համարում ապ-
րելը ընտանիքի, հասարակութեան, պետութեան,
մարդկութեան կամ Աստուծոյ կամքը կատա-

րելու համար, — կարող է նա ճարտար կերպով
ձեացնել իրեն մարդկանց աչքին, խարելով նը-
րանց, բայց այնուամենայնիւ նրա գործունէու-
թեան բուն շարժառիթը կլինի միշտ իւր անձ-
նական երջանկութիւնը, այնպէս որ, երբ բանը
համար ընտրութեան, նա ոչ թէ իւր անձը կը-
զոհէ ընտանիքի, տէրութեան, Աստուծոյ կամքը
կատարելու համար, այլ այդ բոլորը կզոհէ ի-
րեն համար, որովհետեւ, տեսնելով իւր կեանքի
խորհուրդը միայն անձնական երջանկութեան
մէջ, նա չէ կարող վարւել այլ կերպ, քանի չի
փոխի իւր գէպի աշխարհն ունեցած յարաբերու-
թիւնը:

Ճիշտ այդպէս նաև մի մարդ, որի գէպի
աշխարհն ունեցած յարաբերութեան հիմքն
է ծառայութիւն գէպի իւր ընտանիքը
(որպիսիք լինում են յատկապէս կանայք) կամ
գէպի ցեղը, ժողովուրդը, — որքան էլ նա կրկնի,
թէ ինքը քրիստոնեայ է, նրա բարոյականութիւնը
միշտ կլինի ընտանեկան կամ ժողովրդային,
բայց ոչ քրիստոնէական, և երբ գործը համար
ընտրութիւն անելու ընտանեկան-հասարակական
երջանկութեան և Աստուծոյ կամքին ծառայե-
լու մէջ, նա անխուսափելիօրէն կընտրէ ծառա-
յութիւն մարդկանց այն խմբակցութեան, որի
համար, իւր աշխարհայեցողութեամբ, գոյու-
թիւն ունի ինքը, որովհետեւ միմիայն այդ ծա-

ուայութեան մէջ է տեսնում նա իւր կեանքի խորհուրդը:

Եւ ճիշտ այդպէս էլ մի մարդու, —որ իւր գէպի աշխարհն ունեցած յարաբերութեան հիմք ընդունում է իրեն աշխարհ ուղարկողի կամքը կատարելը, —ինչքան էլ ներշնչին, թէ նա պարտաւոր է վարւել համաձայն անձի, ընտանիքի, ժողովրդի ու մարդկութեան պահանջներին՝ հակառակ այդ բարձրագոյն կամքի, նա միշտ կլզոնէ իւր բոլոր կապերը մարդկանց հետ, որպէսզի իրեն ուղարկողի կամքին հակառակ վարւած չլինի, որովհետեւ միայն այդ կամքի կատարման մէջ է տեսնում նա իւր կեանքի խորհուրդը:

Բարոյականութիւնը չէ կարող կրօնից անկախ լինել, որովհետեւ նա ոչ միայն հետեանք է կրօնի, այսինքն այն յարաբերութեան, որի մէջ զգում է մարդ իրեն գէպի աշխարհը, այլ նա մտնում է արդէն, impliqueé, կրօնի մէջ: Ամեն մի կրօն պատասխան է այս հարցին — ինչ է իմ կեանքի նպատակը: Եւ կրօնական պատասխանը ամփոփում է իւր մէջ արդէն ուրոշ բարոյական պահանջ, որը կարող է հանդէս գալ երբեմն կեանքի նպատակը պարզելուց յետոյ, երբեմն էլ նրանից առաջ:

Կեանքի նպատակի մասին եղած հարցին կարելի է պատասխանել այսպէս: կեանքի խորհուրդը անձնական երջանկութեան մէջ է,

ուստի և վայելի՛ր այն բոլոր երջանկութիւնները, որոնք հասանելի են քեզ: կամ՝ կեանքի խորհուրդը մարդկանց որոշ շրջանի երջանկութիւնն է, ուստի և ծառայի՛ր այդ շրջանին քո բոլոր ոյժերով և կամ՝ կեանքի խորհուրդը քեզ առաքողի կամքը կատարելն է, հետևաբար ամբողջ կարողութեամբ ձգտի՛ր ճանաչելու և կատարելու այդ կամքը:

Յիշեալ հարցին կարելի է պատասխանել նաև այսպէս: քո կեանքի խորհուրդը քո անձնական վայելքի մէջ է, որովհետեւ դրա համար է մարդս ստեղծւած, կամ՝ քո կեանքի խորհուրդն է ծառայել այն շրջանին, որին դու քեզ անդամ ես համարում, որովհետեւ դրա համար ես դու ստեղծւած: և կամ՝ քո կեանքի խորհուրդն է ծառայել Աստծուն, որովհետեւ դրա համար ես ստեղծւած դու:

Բարոյականութիւնը ամփոփւած է կրօնի՝ կեանքի մասին տւած բացատրութեան մէջ, ուստի և նա չէ կարող բաժան լինել կրօնից: Այս ճշմարտութիւնը առանձնապէս ակներկ է դառնում ոչ-քրիստոնեայ փիլիսոփաների այն փորձերից, որոնց նպատակն էր իրենց փիլիսոփայութիւնից հանել բարձր բարոյական վարդապետութիւն: Այդ փիլիսոփաները տեսնում են, որ քրիստոնէական բարոյականութիւնն անհրաժեշտ է, որ առանց նրան չի կարելի ապրել.

այդ գեռ քիչ է, նոքա տեսնում են որ նա կայ, ուստի կամ ենում են մի կերպով կապել այն իրենց ոչ-քրիստոնէական փիլիսոփայութեան հետ, և մինչև իսկ իրողութիւնն այնպէս ներկայացնել, որպէս թէ քրիստոնէական բարոյականութիւնը բղիսում է իրենց հեթանոսական կամ հասարակական փիլիսոփայութիւնից: Եւ նոքա փորձում են այդ անել, բայց հէնց այդ իսկ փորձեզը ամեն բանից աւելի ակներե կերպով ցոյց են տալիս ոչ միայն անկախ լինելը, այլ և այն կատարեալ հակասութիւնը, որ գոյութիւն ունի քրիստոնէական բարոյականութեան և հեթանոսական փիլիսոփայութեան միջն:

Քրիստոնէական բարոյագիտութիւնը—այն, որ մենք ընդունում ենք ինեւուանս մեր կրօնական աշխարհայեցողութեան, պահանջում է ոչ միայն մասնաւոր զոհեր ընդհանրութեան համար, այլ և նա պահանջում է հրաժարել իւր անձից և ընդհանրութիւնից՝ Աստծուն ծառայելու համար. մինչդեռ հեթանոսական փիլիսոփայութիւնը հետախուզում է լոկ միջոցներ ըստ կարելոյն մեծ չափով անձնական կամ հասարակական երջանկութիւն ձեռք բերելու համար, ուստի և հակասութիւնն այդ երկուսի միջն անխուսափելի է¹⁾:

¹⁾) Այստեղ դարձեալ բուն նիւթից շեղելով հեղինակը խօսում է ին ու նոր փիլիսոփայութեան բարոյական վարդապետութիւնների մասին՝ նպատակ ու-

Քրիստոնէական բարոյականութիւնը չէ կարող հիմնւած լինել կեանքի մասին եղած հեթանոսական հասկացողութեան վրայ և չէ կարող բղիսած լինել ոչ հեթանոսական փիլիսոփայութիւնից և ոչ ոչ-քրիստոնէական գիտութիւնից. ոչ միայն չէ կարող բղիսած լինել դրանցից, այլ և չէ կարող նոյնիսկ համաձայն լինել դրանց:

Եւ այսպէս էլ հասկացել է միշտ իւրաքանչիւր լրջամիտ ու հետեղական փիլիսոփայութիւն ու գիտութիւն: «ԶԵՆ հաշտառմմեր սիստեմաները բարոյականութեան հետ, և աւելի վատ են նրա համար»—միանգամայն իրաւացիօքն ասում են այդպիսի փիլիսոփաներն ու գիտնականները և շարունակում են իրենց հետագառութիւնները:

Բարոյագիտութեան վերաբերեալ տրակտատները, որոնք չեն հիմնւած կրօնի վրայ, և մինչև անգամ բոլոր կատեխիզիսները շրւում և ուսուցանուում են, և մարդկի կարող են կարծել թէ մարդկութիւնն առաջնորդւում է նըրառնցով. բայց այդպէս թւում է լոկ այն պատճառով, որ մարդկի իրականութեան մէջ առաջնորդւում են չէ թէ այդ տրակտատներով ու

նենալով ցոյց աալ քրիստոնէական բարոյականութեան անկախ լինելը որեէ ոչ-քրիստոնէական փիլիսոփայութիւնից կամ գիտութիւնից:—Մենք այդ մասն էլ աւելորդ համարեցինք գնել այստեղ:

կատեխիզիսներով, այլ կրօնով, որ նոքա միշտ
ունեցել են և ունին. իսկ այդ արակտատներն
ու կատեխիզիսները յօրինում են միայն և եթ
այն բանի հիման վրայ, որ ինքնըստինքեան
բղխում է կրօնից:

Բարոյականութիւնը կրօնից բաժանելու
փորձերը նման են այն բանին, ինչ որ անում
են երեխաները, որոնք ցանկանալով իրենց դուր
եկող մի բոյս տանել ուրիշ տեղ տնկել, պո-
կում են նրանից իրենց համար անգուրեկան ու
իրենց աշքին աւելորդ երեացող արմատները և
այդպէս առանց արմատի տանում են բոյսը տըն-
կում հողի մէջ: Առանց կրօնական հիմքի չէ
կարող լինել ոչ մի իսկական, անկեղծ բարոյա-
կանութիւն, ճիշտ այնպէս, ինչպէս առանց ար-
մատի չէ կարող լինել և ոչ մի իսկական բոյս:

Այսպէս ուրեմն, պատասխանելով ձեր եր-
կու հարցին, ես ասում եմ. «Կրօնը մարդուս ո-
րոշած իւր առանձին, անձնական, որոշ յարա-
բերութիւնն է դէպի անվերջ աշխարհը կամ դէ-
պի նրա սկիզբը: Իսկ բարոյականութիւնը կեան-
քի յարատե առաջնորդն է, որ բղխում է այդ
իսկ յարաբերութիւնից»:

100

ՀՀ Ազգային գրադարան



NL0354726

ԾԱԼԻՌՈՒՄ ԵՆ

Վերաբնիչ (Գոգոլի) թարգմ. Լ. Տատեանի, 50 կ.
Դիմել թիֆլիս «Գիր» և «Գուտառենքերգ»-ին
թաւրիզում Լ. Տատեանին.

Անարեմա (Լ. Անդրէեի) թարգմ. Ա. Յովհաննի-
սեանի, 80 կոպ.

Դիմել՝ թիֆլիս և թաւրիզնոյն հասցէներով:
Հասարակական Աղքերգութիւն (Կ. Տեսմայերի)
թարգմ. Ա. Մելիք Արրահամեանի, 20 կոպ.
Դիմել՝ թաւրիզ թարգմանչին.

Կրօն եւ Բարոյականութիւն (Լ. Տալսասյի)
Դիմել՝ թաւրիզ. Լ. Տատեանին:

Գումարով ուղղղներին 25₀/0 դեղջ.